ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «06» 10 2025թ N 2954-Լ

ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2070-Լ որոշման հավելվածի 16-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հաստատել՝ Մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառման մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
«06» 10
N 2954 Լ հրամանի

ԿԱՐԳ

ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2070-Լ որոշմամբ հաստատված՝ մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) մոնիթորինգի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից:

3. Սույն կարգը սահմանում է մոնիթորինգի հիմնական նպատակները, իրականացման եղանակները, գործիքակազմը և ժամկետները:

2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

4. Մոնիթորինգի իրականացման նպատակներն են.

1) Միջոցառման պայմանների պահպանման ապահովումը.

2) Միջոցառման շահառուների և ներգրավված աշխատողների վերաբերյալ ստացված տեղեկատվության պարբերական գնահատումը.

3) ռիսկերի ու շեղումների վաղ հայտնաբերումն ու դրանց հիման վրա անհրաժեշտ ճշգրտումների կատարումը.

4) ոլորտի զարգացման համար տվյալների ապահովումը:

5. Մոնիթորինգն իրականացվում է անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և Միջոցառման արդյունավետության գնահատման նպատակով՝ տարեկան առնվազն մեկ անգամ: Մոնիթորինգի եղանակներն են.

1) նախնական մոնիթորինգ՝ իրականացվում է դիմումների ընդունման փուլում՝ հիմք ընդունելով Պետական եկամուտների կոմիտեի կողմից ինքնաշխատ կերպով իրականացվող ստուգումների արդյունքները.

2) ընթացիկ մոնիթորինգ՝ իրականացվում է Միջոցառման իրականացման ընթացքում՝ Միջոցառման շահառուների գործունեության և Միջոցառման պայմանների պահպանման վերահսկողության համար՝ եռամսյա պարբերականությամբ.

3) վերջնական մոնիթորինգ՝ իրականացվում է Միջոցառման ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան 2027 թվականի մայիսի 1-ը՝ Միջոցառման ընդհանուր արդյունավետության գնահատման նպատակով:

6. Նախնական մոնիթորինգն իրականացվում է Պետական եկամուտների կոմիտեի, իսկ ընթացիկ և վերջնական մոնիթորինգները՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից:

7. Ընթացիկ և վերջնական մոնիթորինգի ընթացքում կիրառվում է հետևյալ գործիքակազմը.

1) տեղեկատվության պարբերաբար հարցումներ Պետական եկամուտների կոմիտեից.

2) Պետական եկամուտների կոմիտեից և այլ աղբյուրներից տվյալների հավաքագրում և մշակում.

3) ամփոփ հաշվետվությունների կազմում.

4) կանխատեսումների իրականացում:

8. Մոնիթորինգի ընթացքում ստացված բոլոր անձնական տվյալները պաշտպանվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

9. Մոնիթորինգի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է սույն հրամանով սահմանված Ձև-ի համաձայն:

10. Անհրաժեշտության դեպքում կարող են ստացվել նաև այլ տեղեկություններ՝ բացառապես մոնիթորինգի իրականացման նպատակով:

3. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

11.Իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա յուրաքանչյուր հաշվետու տարի կազմվում է համապարփակ ամփոփ հաշվետվություն, որը ներառում է Միջոցառման իրականացման ընթացիկ վիճակի վերլուծությունը, խնդիրների և դրանց պատճառների վերհանումը, Միջոցառման գնահատումը, ինչպես նաև Միջոցառման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Միջոցառման շահառուները և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը պարտավոր են ապահովել մոնիթորինգի ընթացքում հավաքագրված տվյալների ճշգրտությունը և ամբողջականությունը: Սույն Կարգի պահանջները խախտելու դեպքում պատասխանատվությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձև
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
06 10 2025թ.-ի
N 2954-Լ հրամանի

Տեղեկատվություն
Մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառման մոնիթորինգի իրականացման վերաբերյալ

հ/հ	ՀԾՀ	Շահառուի անվանում	Շահառուի գտնվելու վայրը	Շահառուի գործունեության ոլորտը	Մինչ Միջոցառումից օգտվելը Շահառուի աշխատողների ընդհանուր թիվը	Ներգրավված նոր աշխատողների թիվը	Ներգրավված նոր ցածրակարգ աշխատողների թիվը	Ներգրավված նոր աշխատողների միջին ամսական աշխատավարձը	Վերապատրաստում անցած նոր աշխատողների թիվը	Շահառուների դասակարգումը ըստ գիտելիքների կիրառման (գերփոքր, փոքր, միջին, խոշոր)	Ներգրավված աշխատողների կայունությունը (12 ամսից ավելի)	Շահառուների տարեկան շրջանառությունը ցց դրությամբ տարվա համեմատ(%)	Շահառուները տարվա շահույթը/վնասը	Շահառուների տարեկան արտահանման ցց (խախտում տարվա համեմատ %)	Շահառուների կողմից վճարված եկամտային դրամական տուրքերի և հարկերի գումարը (խախտում դրամական %)
1															
2															
...															